# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
## 15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 106-Ա

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հերթական նստաշրջանի՝ սեպտեմբերի 15-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 15-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2) Դրամական օգնություն տրամադրելու մասին:
3) Եղեգնաձոր համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեում վերաբաշխում կատարելու մասին:
4) Համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի թիվ 08-Ա որոշման թիվ 10 հավելվածը նոր խմբագրությամբ շարադրելու մասին:
5) Համայնքային սեփականություն հանդիսացող հողերն աճուրդով օտարելու համար թույլտվություն տալու, Եղեգնաձոր համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 13-ի թիվ 42-Ա որոշումը և 2022 թվականի հունիսի 8-ի թիվ 80-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 14-րդ կետը ուժը կորցրած ճանաչելու մասին:
6) Համայնքային սեփականություն հանդիսացող հողերը մրցույթով վարձակալության տրամադրելու համար թույլտվություն տալու մասին:

7) Եղեգնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 1.53936 հա էներգետիկայի հողը մրցութային կարգով կառուցապատման տրամադրելու համար թույլտվություն տալու մասին:

8) Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող հողատարածքները համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

9) Ավել օգտագործվող հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և 314.1 քմ ավել օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքով վաճառելու մասին:

10) Ավել օգտագործվող հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և 1067 քմ ավել օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքով վաճառելու մասին:

11) Համայնքային սեփականություն հանդիսացող գիշերային լուսավորության հենասյուներով օպտիկական մալուխային գծերի անցկացման համար թույլտվություն տալու և համապատասխան վճարի չափը որոշելու մասին:

12) Անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք տրամադրելու մասին:

13) Սահմանափակ օգտագործման իրավունքով (սերվիտուտ) հողատարածքներ տրամադրելու մասին:

14) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 107-Ա**

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 12-ի թիվ 37-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետը և համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող հանձնաժողովի եզրակացությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի՝

1) 10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2) 02.05.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ հատկացնել հայ-ադրբեջանական սահմանագոտու արևելյան հատվածում տեղակայված մարտական դիրքում հակառակորդի արձակած կրակոցից զոհված զինծառայող Արման Գագիկի Սարգսյանի ընտանիքին /Մալիշկա բնակավայր/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված

ՀՀ Վայոց ձորի մարզի

Եղեգնաձոր համայնքի ավագանու

2022 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 107-Ա որոշման

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ 10.07.01 ԲԱԺՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 4729 /ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ/ ՀՈԴՎԱԾԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄԸ

| ՀՀ | Ազգանուն, անուն | Բնակավայրը | Գումարի չափը /դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Շադինոյան Դոնարա | Եղեգնաձոր | 15,000 |
| 2 | Մաթևոսյան Օֆիկ | Եղեգնաձոր | 20,000 |
| 3 | Մկրտչյան Լուսիկ | Եղեգնաձոր | 10,000 |
| 4 | Հայրապետյան Գոհար | Եղեգնաձոր | 15,000 |
| 5 | Մինասյան Հասմիկ | Եղեգնաձոր | 25,000 |
| 6 | Հայրապետյան Ալլա | Եղեգնաձոր | 30,000 |
| 7 | Սիմոնյան Աննա | Եղեգնաձոր | 20,000 |
| 8 | Մարգարյան Օգսեն | Գետափ | 25,000 |
| 9 | Մկրտչյան Անժելա | Գետափ | 25,000 |
| 10 | Ավետիսյան Արթուր | Գլաձոր | 15,000 |
| 11 | Սարգսյան Նազելի | Գլաձոր | 15,000 |
| 12 | Բաբայան Օվսաննա | Մալիշկա | 25,000 |
| 13 | Բաբայան Գոհար | Մալիշկա | 15,000 |
| ***Ընդամենը*** | | | ***255,000*** |

Համայնքի ղեկավար                Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 108-Ն**

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 4-ի թիվ 23-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումը.

1) Պակասեցնել գործառնական դասակարգման՝

ա. 11.01.02 ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածից 68 518 700 (վաթսունութ միլիոն հինգ հարյուր տասնութ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ,
բ. 06.04.01 ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածից 16 152 000 (տասնվեց միլիոն մեկ հարյուր հիսուներկու հազար) ՀՀ դրամ,
գ. 04.05.01 ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4251 (շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածից 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ,
դ. 01.06.01 ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածից 896 000 (ութ հարյուր ինսունվեց հազար դրամ) ՀՀ դրամ,

ե. 01.03.01 ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4266 (առողջապահական և լաբորատոր նյութեր) հոդվածից 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ:

2) Ավելացնել գործառնական դասակարգման՝

ա. 01.01.01 ոլորտի տնտեսագիտական դասակարգման՝ 4211 (գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր) հոդվածին 17 900 (տասնյոթ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածին 32 800 (երեսուներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամ և 5122 (վարչական սարքավորումներ) հոդվածին 610 000 (վեց հարյուր տաս հազար) ՀՀ դրամ,

բ. 01.03.01 ոլորտի տնտեսագիտական դասակարգման՝ 4261 (գրասենյակային նյութեր և հագուստ) հոդվածին 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ:

գ. 01.06.01 ոլորտի տնտեսագիտական դասակարգման՝ 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամ,

դ. 04.05.01 ոլորտի տնտեսագիտական դասակարգման՝ 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին 82 406 000 (ութսուներկու միլիոն չորս հարյուր վեց հազար) ՀՀ դրամ:

ե. 02.05.01 ոլորտի տնտեսագիտական դասակարգման՝ 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածին 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 109-Ա**

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 08-Ա ՈՐՈՇՄԱՆ ԹԻՎ 10 ՀԱՎԵԼՎԱԾԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անհրաժեշտություն է առաջացել «Եղեգնաձորի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի կանաչապատ տարածքների պահպանություն իրականացնող 6 ամսով նախատեսված սեզոնային բանվորի համար նախատեսված 6 հաստիքային միավորը փոփոխելու 4 հաստիքային միավորով, իսկ 8 ամսով նախատեսված սեզոնային բանվորի 3 հաստիքային միավորը՝ 5 հաստիքային միավորով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի՝ «Եղեգնաձոր համայնքի ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 08-Ա որոշմամբ հաստատված թիվ 10 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգնաձոր համայնքի ավագանու
2022 թվականի սեպտեմբերի 15-ի
թիվ 109-Ա որոշման

Հավելված N 10
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգնաձոր համայնքի ավագանու
2022 թվականի հունվարի 17-ի
թիվ 08-Ա որոշման

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների քանակը՝ 51/հիսունմեկ/

2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| | Պաշտոնը | Աշխատած ամիսները | Հաստիքային միավորը | Դրույքաչափը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| | Վարչական աշխատողներ | | | | |
| 1 | Տնօրեն | 12 | 1 | 230,000 | 2,760,000 |
| 2 | Հաշվապահ | 12 | 1 | 165,000 | 1,980,000 |
| 3 | Ինժեներ-մեխանիկ | 12 | 1 | 220,000 | 2,640,000 |
| 4 | Օպերատոր-հաշվառիչ | 12 | 2 | 125,000 | 3,000,000 |
| | **Ընդամենը** | | 5 | 740000 | 10,380,000 |
| | Կանաչապատ տարածքների պահպանություն իրականացնող աշխատողներ | | | | |
| 1 | Տեղամասի պետ | 12 | 1 | 220,000 | 2,640,000 |
| 2 | Բանվոր/մշտական | 12 | 4 | 200,000 | 9,600,000 |
| 3 | Բանվոր/սեզոնային | 6 | 4 | 200,000 | 4,800,000 |
| 4 | Բանվոր/սեզոնային | 8 | 5 | 200,000 | 8,000,000 |
| 5 | Ջրբաշխիչ | 12 | 4 | 95,000 | 4,560,000 |
| 6 | Պահակ -բանվոր | 12 | 1 | 200,000 | 2,400,000 |
| | **Ընդամենը** | | **19** | **1115000** | **32,000,000** |
| | Գերեզմանատան պահպանություն իրականացնող աշխատող | | | | |
| 1 | պահակ/գերեզման | 12 | 1 | 100,000 | 1,200,000 |
| | **Ընդամենը** | | **1** | **100000** | **1200000** |
| | Սանիտարական մաքրում իրականացնող աշխատողներ | | | | |
| 1 | Աշխատանքային ղեկավար | 12 | 1 | 210,000 | 2,520,000 |
| 2 | Հավաքարար | 12 | 6 | 200,000 | 14,400,000 |
| | **Ընդամենը** | | **7** | **410000** | **16,920,000** |
| | Աղբահանություն իրականացնող աշխատողներ | | | | |
| 1 | Վարորդ | 12 | 5 | 200,000 | 12,000,000 |
| 2 | Բանվոր | 12 | 8 | 200,000 | 19,200,000 |
| 3 | Աղբավայրի պահակ | 12 | 1 | 100,000 | 1,200,000 |
| | **Ընդամենը** | | **14** | **500000** | **32,400,000** |
| | Ավտոպարկ | | | | |
| | | | | | |
| **1** | **վարորդ տրակտորի** | **12** | 1 | 200000 | 2,400,000 |
| **2** | **վարորդ ուազ/ավտոբուս** | **12** | 1 | 150000 | 1,800,000 |
| **3** | **զոդող** | **10** | 1 | 140,000 | 1,400,000 |
| **4** | **Էլեկտրիկ** | **12** | 2 | 140,000 | 3,360,000 |
| | **Ընդամենը** | | 5 | **630,000** | **8,960,000** |
| | ***Ընդամենը*** | | ***51*** | ***3,495,000*** | ***101,860,000*** |

**Համայնքի ղեկավար՝** **Դ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 110-Ա**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի ԹԻՎ 42-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի ԹԻՎ 80-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾԻ 14-ՐԴ ԿԵՏԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ թույլտվություն Եղեգնաձոր համայնքի /բնակավայրերի/ վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարելու համար՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 13-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող 1.85 հա մակերեսով հողատարածքը մեկ լոտով աճուրդով օտարելու մասին» թիվ 42-Ա որոշումը և Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 8-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող հողերն աճուրդով օտարելու համար թույլտվություն տալու մասին» թիվ 80-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 14-րդ կետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգնաձոր համայնքի ավագանու
2022 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 110-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ/ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԻ

# ՑԱՆԿ

| ՀՀ | Համայնքի բնակավայրը, որի վարչական տարածքում գտնվում է հողը | Սեփականության իրավունքը | Հողատեսքի | | | Կադաստրային ծածկագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համարը | Լոտը | Մեկնարկային գինը /կադաստրային արժեքի տոկոսը/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Չափը /հա/ | | | |
| 1 | Եղեգնաձոր | Համայնքային | Բնակավայրերի | Բնակելի կառուցապատման | 0.09257 | 10-001-0147-0015 N 22072022-10-0008 | 1 | 2 672 960 (կադաստրային արժեքի 100%) |
| 2 | Եղեգնաձոր | Համայնքային | Գյուղատնտեսական | Այլ հողատեսք | 0.40902 | 10-001-0056-0067 N 06092022-10-0035 | 1 | 153 384 (կադաստրային արժեքի 600%) |
| 3 | Եղեգնաձոր | Համայնքային | Գյուղատնտեսական | Այլ հողատեսք | 1.85 | 10-001-0383-0176 N 03052019-10-0016 | 1 | 346 900 (կադաստրային արժեքի 300%) |
| 4 | Եղեգնաձոր | Համայնքային | Գյուղատնտեսական | Վարելահող | 0.33 | 10-001-0308-0041 N 27072022-10-0006 | 1 | 240 630 (կադաստրային արժեքի 100%) |
| 5 | Եղեգնաձոր | Համայնքային | Գյուղատնտեսական | Վարելահող | 0.14404 | 10-001-0308-0021 N 27072022-10-0005 | | |
| 6 | Եղեգնաձոր | Համայնքային | Գյուղատնտեսական | Վարելահող | 0.155 | 10-001-0382-0101 N 26102018-10-0004 | | |
| 7 | Եղեգնաձոր | Համայնքային | Բնակավայրերի | Հասարակական կառուցապատման | 0.00295 | 10-001-0050-0184 N 14072022-10-0005 | 1 | 131 050 (կադաստրային արժեքի 100%) |
| 8 | Եղեգնաձոր | Համայնքային | Գյուղատնտեսական | Այլ հողատեսք | 12.52912 | 10-001-0383-0186 N 07092022-10-0011 | 1 | 1 017 990 (կադաստրային արժեքի 130%) |
| 9 | Գետափ | Համայնքային | Գյուղատնտեսական | Այլ հողատեսք | 0.272 | 10-014-0196-0037 N 14092022-10-0008 | 1 | 102 000 (կադաստրային արժեքի 600%) |
| 10 | Գետափ | Համայնքային | Գյուղատնտեսական | Այլ հողատեսք | 0.45567 | 10-014-0196-0036 N 14092022-10-0002 | 1 | 170 880 (կադաստրային արժեքի 600%) |
| 11 | Գլաձոր | Համայնքային | Գյուղատնտեսական | Այլ հողատեսք | 0.3 | 10-015-0322-0008 N 31082022-10-0032 | 1 | 56 250 (կադաստրային արժեքի 300 %) |
| 12 | Գետափ | Համայնքային | Գյուղատնտեսական | Արոտավայր | 1.15691 | 10-014-0128-0059 N27052022-10-0031 | 1 | 355 800 (կադաստրային արժեքի 100% ) |

Համայնքի ղեկավար՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 111-Ա**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ թույլտվություն Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր և Մալիշկա բնակավայրերի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի և գյուղատնտեսական նշանակության հողերից մրցութային կարգով վարձակալության տրամադրելու համար՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգնաձոր համայնքի ավագանու
2022 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 111-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ/ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻՑ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԵՐԻ

## ՑԱՆԿ

| ՀՀ | Համայնքի բնակավայրը, որի վարչական տարածքում գտնվում է հողը | Սեփականության իրավունքը | Հողատեսքի | | | Կադաստրային ծածկագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համարը | Լոտը | Մեկնարկային գինը /կադաստրային արժեքի տոկոսը/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Չափը /հա/ | | | |
| 1 | Եղեգնաձոր | Համայնքային | Բնակավայրերի | Հասարակական կառուցապատման | 0.0006 | 10-001-0031-0057 N25072022-10-0018 | 1 | 36 000 (կադաստրային արժեքի 100%) |
| 2 | Մալիշկա | Համայնքային | Գյուղատնտեսական | Այլ հողատեսք | 0.0396 | 10-032-0221-0896 N10062022-10-0018 | 1 | 10 000 (կադաստրային արժեքի 404 %) |
| 3 | Մալիշկա | Համայնքային | Գյուղատնտեսական | Այլ հողատեսք | 0.0396 | 10-032-0221-0894 N25072022-10-0012 | 1 | 10 000 (կադաստրային արժեքի 404 %) |
| 4 | Մալիշկա | Համայնքային | Գյուղատնտեսական | Այլ հողատեսք | 0.0396 | 10-032-0221-0895 N26072022-10-0001 | 1 | 10 000 (կադաստրային արժեքի 404 %) |
| 5 | Մալիշկա | Համայնքային | Գյուղատնտեսական | Այլ հողատեսք | 0.0396 | 10-032-0221-0893 N29062022-10-0012 | 1 | 10 000 (կադաստրային արժեքի 404 %) |

Համայնքի ղեկավար՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
**15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 112-Ա**

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 1.53936 ՀԱ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀՈՂԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի $48^1$ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերի և 76-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ թույլտվություն Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 1.53936 հա էներգետիկայի հողը /կադաստրային ծածկագիր 10-001-0343-0117/ մրցութային կարգով կառուցապատման տրամադրելու համար՝ արևային ֆոտովոլտային կայան կառուցելու նպատակով:

2. Մրցույթի մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 0.5%-ը՝ 222 250 /երկու հարյուր քսաներկու հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ

ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 113-Ա**

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 11-ի N 1730-Ն որոշումը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 10-001-0008-0005 կադաստրային ծածկագրով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման, 0.04593 հա և Եղեգնաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 10-015-0148- կադաստրային ծածկագրով, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը վարելահող, 0.45283 հա հողատարածքները ճանաչել որպես համայնքային սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
**15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 114-Ա**

## ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 314.1 ՔՄ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգնաձոր նոտարական տարածքի նոտար Սոնյա Պողոսյանի կողմից 2019 թվականի նոյեմբերի 15-ին հաստատված ժառանգության իրավունքի վկայագիրը, առաջին պետական գրանցման հանգամանքը և քաղաքացի Ֆենյա Ավագյանի դիմումը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ճանաչել քաղաքացի Ֆենյա Քաջիկի Ավագյանի /ծնված՝ 20.02.1960թ./ սեփականության իրավունքը Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի փողոց 11, տուն 27 հասցեում գտնվող, հողաբաժնի չափից ավել օգտագործվող 614.1 քմ բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2. Սեփականաշնորհման չափի 20 տոկոսից ավել օգտագործվող 314.1 քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքով օտարել քաղաքացի Ֆենյա Քաջիկի Ավագյանին:

3. 314.1 քմ մակերեսով հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել 74 640 /յոթանասունչորս հազար վեց հարյուր քառասուն/ ՀՀ դրամ՝ կադաստրային արժեքի 30 տոկոսը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 115-Ա**

## ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 1067 ՔՄ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգնաձոր նոտարական տարածքի նոտար Սոնյա Պողոսյանի կողմից 2016 թվականի փետրվարի 5-ին հաստատված ժառանգության իրավունքի վկայագիրը, առաջին պետական գրանցման հանգամանքը և քաղաքացի Մուշեղ Դավթյանի դիմումը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ճանաչել քաղաքացիներ Մուշեղ Սիսակի Դավթյանի /ծնված՝ 1960թ./, Տատյանա Ավետի Դավթյանի /ծնված՝ 1967թ./, Սիսակ Մուշեղի Դավթյանի /ծնված՝ 1978թ./ և Սևակ Մուշեղի Դավթյանի / ծնված՝ 1988թ./ սեփականության իրավունքը Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր քաղաքի Ա. Խանջյան փողոց, թիվ 14 հասցեում գտնվող, հողաբաժնի չափից ավել օգտագործվող 1287 քմ բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2. Սեփականաշնորհման չափի 20 տոկոսից ավել օգտագործվող 1067 քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքով օտարել քաղաքացի Մուշեղ Սիսակի Դավթյանին:

3. 1067 քմ մակերեսով հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել 924 300 /ինը հարյուր քսանչորս հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ՝ կադաստրային արժեքի 30 տոկոսը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
## 15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 116-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐՈՎ ՕՊՏԻԿԱԿԱՆ ՄԱԼՈՒԽԱՅԻՆ ԳԾԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով «ՌԵԴԻՆԵՏ» ՓԲԸ-ի տնօրենի գրությունը և դրան կից՝ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի լիազորագիրը /մուտքի թիվ՝ 1296/.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր քաղաքի Սպանդարյան փողոցի թվով 11 /տասնմեկ/, Վ. Գևորգյան փողոցի թվով 3 /երեք/, Նարեկացի փողոցի թվով 7 /յոթ/, Մոմիկի փողոցի թվով 18 /տասնութ/, Կամոյի փողոցի թվով 21 /քսանմեկ/, ընդհանուր՝ թվով 60 /վաթսուն/, գիշերային լուսավորության հենասյուներով օպտիկական մալուխային գծերի անցկացման համար «ՄՏՍ Հայաստան» ՓԲ ընկերությանը տալ թույլտվություն՝ ամսական 24 000 (քսանչորս հազար) ՀՀ դրամ վճարի դիմաց:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ
## 15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 117-Ա

## ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-699 հոդվածների՝ Գլաձոր, Գետափ, Մալիշկա և Վերնաշեն բնակավայրերում Եղեգնաձոր համայնքի ենթակայությամբ գործող մանկապարտեզ ՀՈԱԿ-ների աշխատանքային գործունեությունն իրականացնելու նպատակով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի 33-րդ փողոց 2-րդ փակուղի թիվ 2 հասցեում գտնվող անշարժ գույքը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 09032021-10-0011 (հասարակական կառուցապատման հող՝ կադաստրային ծածկագիր 10-015-0076-0026 և մանկապարտեզի շենք՝ կադաստրային ծածկագիր՝ 10-015-0076-0026-001)) անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին:

2. Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի 19-րդ փողոց 5-րդ փակուղի թիվ 4 հասցեում գտնվող անշարժ գույքը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 20683305 (հասարակական կառուցապատման հող՝ կադաստրային ծածկագիր 10-014-0013-0028 և մանկապարտեզի շենք՝ կադաստրային ծածկագիր՝ 10-014-0013-0028-001)) անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի «Արևիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին:

3. Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի Կենտրոնական փողոց 3-րդ նրբանցք թիվ 3 hասցեում գտնվող անշարժ գույքը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 27022013-10-0106 (hասարակական կառուցապատման հող՝ կադաստրային ծածկագիր 10-032-0075-0011 և մանկապարտեզի շենք՝ կադաստրային ծածկագիր՝ 10-032-0075-0011-001)) անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին:

4. Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի Թանահատի փողոց թիվ 29 hասցեում գտնվող անշարժ գույքը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 02042021-10-0029 (hասարակական կառուցապատման հող՝ կադաստրային ծածկագիր 10-042-0071-0007, մանկապարտեզի շենք՝ կադաստրային ծածկագիր՝ 10-042-0071-0007-001 և կաթսայատուն՝ 10-042-0071-0007-002)) անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 118-Ա**

## ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՍԵՐՎԻՏՈՒՏ) ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 210-211 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով «Դուստր Սոլար» ՍՊ ընկերության տնօրեն Կ. Մինասյանի կողմից ներկայացված դիմումը /մուտքի թիվ 1528/, «Սուն Սոլար» ՍՊ ընկերության տնօրեն Կ. Մինասյանի կողմից ներկայացված դիմումը /մուտքի թիվ 1529/, «Արմ Սոլար» ՍՊ ընկերության տնօրեն Տ. Մանուկյանի կողմից ներկայացված դիմումը /մուտքի թիվ 1530/, «Այ Սոլար» ՍՊ ընկերության տնօրեն Ա. Դավթյանի կողմից ներկայացված դիմումը /մուտքի թիվ 1531/ դիմումը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, 0.55554 հա, 1.04288 հա, 2.67400 հա, 1.51921 հա, 1.50201 հա, ընդհանուր՝ 7.29364 հա հողատարածքը, 25 /քսանհինգ/ տարի ժամկետով,սահմանափակ օգտագործման իրավունքով /սերվիտուտ/ տրամադրել «Դուստր Սոլար» ՍՊ ընկերությանը՝ հենասյուների տեղադրման և էլեկտրահաղորդման լարերի անցկացման նպատակով:

2. Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, 0.56696 հա, 1.04552 հա, 2.62919 հա, 1.58996 հա, 1.37966 հա, ընդհանուր՝ 7.21129

հա հողատարածքը, 25 /քսանհինգ/ տարի ժամկետով,սահմանափակ օգտագործման իրավունքով /սերվիտուտ/ տրամադրել «Սուն Սոլար» ՍՊ ընկերությանը՝ հենասյուների տեղադրման և էլեկտրահաղորդման լարերի անցկացման նպատակով:

3. Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, 0.56636 հա, 1.07813 հա, 2.82286 հա, 1.57788 հա, 1.51733 հա, ընդհանուր՝ 7.56253 հա հողատարածքը, 25 /քսանհինգ/ տարի ժամկետով,սահմանափակ օգտագործման իրավունքով /սերվիտուտ/ տրամադրել «Արմ Սոլար» ՍՊ ընկերությանը՝ հենասյուների տեղադրման և էլեկտրահաղորդման լարերի անցկացման նպատակով:

4. Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, 0.65973 հա, 0.85561 հա, 2.66527 հա, 1.44675 հա, 1.40552 հա, ընդհանուր՝ 7.03288 հա հողատարածքը, 25 /քսանհինգ/ տարի ժամկետով,սահմանափակ օգտագործման իրավունքով /սերվիտուտ/ տրամադրել «Այ Սոլար» ՍՊ ընկերությանը՝ հենասյուների տեղադրման և էլեկտրահաղորդման լարերի անցկացման նպատակով:

5. Եղեգնաձորի համայնքի ղեկավար Դավիթ Հարությունյանին՝ սույն որոշման 1-4 կետերում նշված կազմակերպությունների հետ,օրենսդրությամբ սահմանված կարգով,կնքել սերվիտուտի պայմանագրեր՝25 /քսանհինգ/ տարի ժամկետով՝ յուրաքանչյուրը 500 000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ տարեկան վճարով: Պայմանագրերի նոտարական վավերացման և պետական գրանցման ծախսերը թողնել համապատասխան կազմակերպությունների վրա:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 119-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ որոշել՝ 2022 թվականի հոկտեմբերի 20-ին, ժամը 18:00-ին՝ Գլաձոր բնակավայրի մշակույթի տան կոնֆերանս դահլիճում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**